



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ  
ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՍՈՒՐԵՆ ԵՎ ՇԱՔԵ ԳԱԼԵՆՏԵՐՅԱՆՆԵՐԻ  
ԲԱՐԵՐԱՐՈՒԹՅԱՄԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՍՈՒՐԲ ՇՈՂԱԿԱԹ  
ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

**ՎԱԶԳԷՆ ԵԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,  
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕԻՆ ԱԶԳԻՍ  
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,  
ԵԱՅՐԱՊԵՏՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵՆԱՐ  
ԱՐՈՒՈՑ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ  
ԵԿԵՂԵՑՈՒՆ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ**

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂԶՈ՛ՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵՍԻ  
ՏԱՆՆ ԿԵԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ  
ՀԱՅՈՑ, ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ ԹՈՒՐԳԻՈՅ ՀԱՅՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍ-  
ԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱՆԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ  
ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇ-  
ՏՈՆԷԻՅ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Ամենակալին Աստուծո ռդմութեամբ, վերանորոգվեցալ Հայրենի հո-  
ղին վրա մեր պատմական սուրբ վանքերին մեկը ևս՝ Ս. Շողակաթ եկեղեցին,  
որ մեր մյուս հնադարյան վանքերու կողքին, կհանդիսանա քաղաքիս գո-  
հար մը՝ հայկական նարտարապետական իր կառույցով:

Հոկտեմբերի 15-ին, շաբաթ օր, օծեցինք և օրհնեցինք վերանորոգված  
Ս. Շողակաթ եկեղեցւո Ս. Սեղանը, և հաջորդ օրը, հոկտեմբերի 16-ին, կի-  
րակի, հայրապետական սուրբ պատարագ մատուցինք հավատացյալներու  
բազմության և բարեպաշտ բարերարներ, հալեպաքեակ տեր և տիկին Սուրեն  
և Շաֆե Գալեմեքյաններու ներկայության:

Ս. Շողակաթ եկեղեցին Վաղարշապատի մեջ երբեմնի արհմական  
հնձանն էր, որտեղ բնակություն հաստատած էին Ս. Հոփսիմյան կույսերը,  
սպասելով Տիրոջ այցելության:

Հայ հավատքի Հայր և մեր ժողովուրդի հոգեւոր լուսավորության «լուսաւոր  
վերակացու» Ս. Գրիգոր Պարթև Հայրապետի օրով, ինչպես կվկայէ Ագա-  
թանգեղոս, «ի հնձանն, ի մէջ այգայն, ուր էին վանք նոցա, շինեցին, կազ-  
մեցին զտեղիսն և զարդարեցին ոսկի արծաթ կանքեղօք լուցելովք, և լապ-  
տեբօք վառելովք և աշտանակօք բորբոքելովք»:

Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի համաձայն, «ի տեղուջ հեղման արեանն  
կուսանաց, շինեցին երես վկայարանս, մին ի հիւսիսոյ յարեւելից կողմանէ  
քաղաքին, ուր վկայեաց սանականն Հոփսիմէ երեսուն և երկու ընկերօք, և  
զմիման շինեցին ի հարաւակողմն կուսէ անտի, ուր վկայեաց Գայիանէ, ճորուն  
սնուցիչն երկու ընկերօք, և Զմիմնն եւս, ՄՕՏ Ի Հնձանն, Ի Մէջ ԱՅԳԻՈՅՆ»:

Այսպիսով, Ս. Շողակաթ եկեղեցիին գոյությունը կրարձրանա մինչև Դ դար, Ս. Գրիգոր Լուսավորիչ և Տրդատ աշխարհաշեն բազմադրի ժամանակները:

Ավելի ուշ, աղոթքի այս տունը կոչվեցավ նաև ՇՈՂԱԿԱԹ, «ֆանգի ի նմա շող աստուածեղէն ի Հօրէ լուսոյ ծագեաց», կամ ՄԱՐԻԱՆՆԻ ՎԱՆՔ, անունովը Ս. Հովսիսիմն կույսի խումբեն նահատակ Մարիաննի, որուն սուրբ նըշխարներուն վրա բարձրացած է Ս. Շողակաթ եկեղեցին: Այսօր ալ, եկեղեցիին հարավային կողմը, կգտնվի նահատակ կույսի վեմ-տապանը, ուստի սրբավայր մը մեր հավատացյալներուն համար:

Ս. Շողակաթ եկեղեցին ալ դարերու ընթացքին ենթարկված է շարք մը ավերածություններու, Արարատյան դաշտին մեջ գտնվող մեր հոգեւոր-իմացական այլ մեծ կեդրոններուն հետ, և ի վերջոյ, 1694 թվականին, Նահապետ Ռաֆայելի կաթողիկոսը, ֆանդելով հին վկայարանի վրա շինված եկեղեցին, ի նորո կառուցած է այսօրվան Ս. Շողակաթ եկեղեցին, անսյուն կաթողիկե փոքր գավիթով մը, առատ նվերներովը նախիջևանցի բարերար Աղամալին:

Մեր օրերուն, «յուսովն անմահին Աստուծոյ», վերստին վերանորոգվեցավ պատմական այս սուրբ եկեղեցին ալ և բարեկարգվեցավ շրջափակը, սրտաբուխ նվիրատւութեամբը հալեպարենակ աստվածասեր տեր և տիկին Սուրեն և Շաֆե Գալեմաբեյաններու:

Հավատացյալ հայ ժողովուրդը և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը երախտագիտութեամբ պիտի հիշեն միշտ Ս. Շողակաթ եկեղեցիի հավատացյալ բարերարները և պիտի օրհնեն գանձոք:

Թող Տերը վարձահատույց ըլլա անոնց եկեղեցաշեն գործերուն և զանոնք պահեն, պահպանեն երկա՛ր տարիներ, ֆաջառողջ ու երջանիկ, խաղաղութեան մեջ:

Թող միշտ կանգուն, շեն ու պայծառ մնան մեր պատմական բոլոր սրբավայրերը, և թող անոնցմն միշտ լույս և երկնային շնորհներ տարածվին Հայոց աշխարհին և մեր հավատավոր Ազգի բոլոր գավակներուն վրա: Ամեն:

*Աստուծոյ Բնութեան*

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄՆՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 1-ն դեկտեմբերի  
1960 Փրկչական տմի,  
և ի տունարիս Հայոց Ռեժի,  
ի վանս Սրբոյ Էջմիածնի: